**Արձանագրություն N 3**

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար համացանցի /ինտերնետ կապ/ տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-24/3 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19 — 31 հոկտեմբերի 2023թ.
ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Լևոնյան, Տ.Պարսիյան, Ա.Մանուկյան, Ա.Լալայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

### *1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ*

| *Չափաբաժնի համարը* | *Չափաբաժնի անվանումը* | *Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)* |
|---|---|---|
| 1 | համացանց | 3000000 |

### *2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ*

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ նաև՝ Համակարգ/ 27.10.2023թ.-ին ժամը 14:30-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 30.10.2023 թ.-ին ժամը 14:30-ին:

### *3. Հայտեր ներկայացրած մասնակիցների փկյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն*

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Գործունեության հասցեն | Կապի միջոցներ | Էլ. հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | Յուքոմ ՓԲԸ | Երևան, Դավիթ Անհաղթ 8/4 | 095555054 | corporate@ucom.am |
| 2 | ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ ՓԲԸ | ք.Արովյան, Խաղաղության 1 | 060469937, 077902909 | b2b@rtarmenia.am |

### *4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ*

ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

### *5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

Հրավերի վերաբերյալ 18.10.2023թ. ստացվել է հարցում և 19.10.2023թ. տրամադրվել է պարզաբանում:

### 6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

| Հ/Հ | Մասնակիցներ | Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | Յուքոմ ՓԲԸ | 2490000 | 20 % | 2988000 | 2490000 | 20 % | 2988000.00 | |
| | ՋԻԵՆՍԻ-ԱԼՖԱ ՓԲԸ | 3250000 | 20 % | 3900000 | 3250000 | 20 % | 3900000.00 | Մերժված |

Աճուրդն ամփոփվել 30.10.2023 թվականին: Ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է Յուքոմ ՓԲԸ -ն:

### 7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտի գնահատման վերաբերյալ

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Յուքոմ ՓԲԸ -ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր/, արձանագրեց՝

Հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Յուքոմ ՓԲԸ-ի հայտը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:*

### 8. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

31.10.2023 թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

8.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Յուքոմ ՓԲԸ-ին հայտարարել ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի մյուս մասնակից՝ ՋԻԵՆՍԻ-ԱԼՖԱ ՓԲԸ-ի հայտը մերժել:

8.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

8.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________________ Վարդան Թորոսյան

անդամներ՝ ________________ Լևոն Լևոնյան

________________ Տիգրան Պարսիլյան

________________ Արմենակ Մանուկյան

________________ Անժելա Լալայան

քարտուղար՝ ________________ Հերմինե Սաղաթելյան